

էին սովորականից վաղ, շատ վաղ, ու ժամ՝
էին տանում գուրսը ցուրան էր, մեռթ, բայց
այնաեղ ժամում հարիւրաւոր, հազարաւոր
մոմեր էին վառուում խորհրդաւոր լոյս և ջեր-
մութիւն սփռում... լոյս և ջերմութիւն մեր
մանկական հոգեւոյ մէջ, որ յաւիտիան անշի-
ջանելի պէտք է մնայ, եթէ զառնանք և լի-
նինք կրկին իրրե անմեղ մանուկներ ...

Որչափ աւելի գեղեցիկ էր և փառաւոր
արդեօք այն երեկոն, երբ ոյս սքանչելի խոր-
հուրդն առաջին անգամ յայտնու եցաւ աշ-
խարհին, երբ աղքատ մոռւքի մէջ գրած էր
այն հրաշալի Մանուկը, որ խաղաղութեան
իշխան պէտք է լինել՝ զայլը զառան հետ
ճարակել տալով, առիւծը որթի հետ, հաշտ ու
հնազանդ, միասեղ վարելով ... իսկ հրեշտակ-
ները երգում էին վերեից, բայցօթեայ հովիւ-
ները ձոյնակցում ներքեից՝ «Փառք ի բար-
ձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն,
ի մարդիկ հածութիւն ...» Որչափ պայծառ
էր և գեղեցիկ նաև այն առաւօտք երբ աս-
տուածային Մանուկը լցեալ արդէն հասակաւ
և շնորհօք, բայց հեզ և խոնարհ միշտ իրրե
անմեղ մանուկ, իրրե անտրատ զառն Աս-
տուծոյ՝ յայտնուեցաւ Յորդանանի խաղաղ
ափերում ապաշխարութեան մլրտութիւն
ընդունելու Յովհաննէս Մ'կրտչից:

Զուր տեղը չէ, որ Հայաստանեայց ս. Ե-
կեղեցին այդ երկու սրբազն յիշասակները
միացնումէ ի մի անբաժան տօն սուրբ Յայտ-
նութեան. թեթզեհեմի այրից սկսած մինչեւ
Յորդանանի ափը մի լուսաւոր յայտնութեան
անընդհատ շրջան է, որի վերայ երկնքից
ծագած Արեգակը խաղաղութեան լոյս և
սփռում և մարդոց ի հածութիւն հրաւի-
րում՝ հրաւիրում զանել իրենց որոնած եր-
ջանկութիւնն այն երանաւետ աշխարհի մէջ,
ուր թագաւորում է արդարութեան և ծը-
մարտութեան ուսուցիչը՝ մանուկ Քրիստոս,
աշխարհի մեղքը իւր վերայ վերջնող Աստու-
ծոյ զառը Քրիստոս:

Ս. ՅՈՎ. ՀՈ. ՆՆԷ ՄԿՐՏՉ. *

«Սկիզբ աւետարանի Յիսուսի Որդույ Աս-
ունծոյ, ուսկս և զեւալ և ի մարզարէս. Ահաւասիկ ևս
առաջին գերեշտակ իմ առաջի լոյս որ հանդերձնեցի զա-
նապարէս յուսուցի լոյս. 2այն բարյառոյ յանապատի,
պատրաստ արարէ զանապատն Տեսն և ուղիղ արարէ
զշախու նորա: Եւ եղի՛ զի Յովհաննէն մկրտչը և յա-
րողք մերտուրին ապաշխարութեան ի բոլորթիւն մեղաց»:

**Ժամանակակից քննադատների մե-
ծագոյն մասը մեր կանոնական չորս տ-
ւետարանների մէջ ամենահինը համարում է
Մարկոսի աւետարանը, և ահա այդ աւե-
տարանի սկզբում կարգում ենք յառաջ բե-
րած տողերը, որոնց ուղիղ իմաստը որոշելու-
համար գարերի ընթացքում հազարաւոր մեկ-
նարաններ գործ են զրել իրենց սրամու-
թիւնը, սակայն զեռ այժմ հաստատ կարելի
չէ ասել թէ նոցա տուած բազմատեսակ բա-
ցարութիւններից ո՞րն է ուղիղը: Առաջին
գժուալութիւն պատճառող հանգամանքն այն
է, որ թէ յունարէն բնազրի ամենահին ձե-
ռագիրները և թէ թարգմանութիւնները մի
քանի կարեռ կետերում տարբեր ընթեր-
ցուածներ են ներկայացնում: Այսպէս՝ փո-
խանակ «ի մարդարէս» զրեթէ բոլոր հին (ինչ-
պէս նաև հայերէն մի քանի ***) ձեռագիր-
ների մէջ կարգում ենք «յեսայի մարգարէ».
«և» պակաս է մի քանի նշանաւոր ձեռագիր-
ների մէջ «քարոզէր» բառից առաջ, որով
մեծ փօփոխութիւն կարող է յառաջ զալ
բնազրի իմաստի մէջ, այլ և մի շարք ձեռա-
գիրներում «Յիսուսի Քրիստոսի» խօսքերից
յետոյ պակաս է «Որդւոյ Աստուծոյ», պա-
կաս է բնազրի մէջ հայերէնի «և» ը՝ «եղե զի
Յովհաննէս նախադասութեան սկզբում»:**

Բնդշահոււր առմամբ ներկայ հասուածը
երեք կերպ հասկանալ կարելի է: Նոր մեկնա-
րաններից շատերը վերջակէտ են զնում»

* Մեմբ նպատակ ենի դնում սորտենի մի շարժ
յոդուածներ սկսել, որոնի պիտի և ծառայեն աւետարանի
յժուարքիւնների կամ բիշխմացութիւնների և երակայ հա-
սուածներ պարզաբնելու և նոցա կրօնական-բարյայական
բովանդակութիւնը խորհրդագութիւնների հիւր դարձներ:

** Տես. Զօնտապիսն երաս. Աստուծաշունաւ. Մամ.



«Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի (Որբոյ Աստուծոյ)» խօսքերից յետոյ, ընդունելով այդ խօսքերն իրրե վերնազիր ամբողջ զրքի (ոմանք միայն առաջին պրակի) համար, որով ուրեմն Մարկոս կամեցել է ասիլ, թէ նա զիտաւորութիւն ունի իւր այս զրուածքի մէջ պատմելու Քրիստոսի աւետարանի սկիզբը կամ ինչպէս սկսուիլը (շարունակուիլն ու տարածուիլը ուրիշներին թողնելով): Հին մեկնարաններն ընդհակառակն վերջակէտ զնում են «զշաւիլո նորա» խօսքերից յետոյ և թարգմանում են մօտաւորապէս այս իմաստով. «Յիսուս Քրիստոսի աւետարանի սկզբնաւորութիւնը եղաւ այնպէս, ինչպէս որ զրուած է մարգարէութեանց (կամ Եսայի մարգարէութեան) մէջ, թէ և լուները ուրդիք ըստ մեզ ընազրի ոգուն աւելի համապատասխան՝ բացատրութիւնն է, ամրողն իրրե մի պարբերութիւն ընդունելով՝ մարգարէական վկայութիւններն, իրրե միջանկեալ փակագծի մէջ առնել և թարգմանել. «Յիսուսի Քրիստոսի աւետարանի սկիզբը (կամ սկիզբ գնողը)՝ ինչպէս որ զրած է մարգարէութեանց մէջ (կամ համաձայն մարգարէութեանց)՝ եղաւ Յովհաննէս և լուն»: Այս բացատրութիւնն աւելի հաւանական կը զառնայ մանաւանդ այն դէպքում, եթէ մի քանի նոր քննազամների հետ ընդունենք, որ Մարկոս (ինչպէս և միւս աւետարանիչները *) սկըզբում զրած է եղել միայն. «Որպէս և զրեալ է յեսայի մարգարէ. Զայն բարբառոյ յանապատի և լուն»: իսկ յետոյ մի օտար ձեռք ուրիշ տեղից առնելով ** աւելացրել է, «Աշւասիկ ես առաքեմ և լուն», որով յառաջ է եկել այն, արդէն զ.. գարում քրիստոնէութեան սխերիմ թշնամի Պորֆիրոսի համար ծաղրի առարկայ գարձած՝ անյարմարութիւնը, որ Եսայի մարգարէի անուան ներբոյ կարգում ենք նախ մի վկայութիւն Մարտիա մարգարէից *** և ապա միայն բռն Եսայի մարգարէից առնուած վկայութիւնը ⁴, Անշուշտ այդ անյարմարութիւնը նկատելով է

նաև, որ շատ ձեռազիբների մէջ փոխանակ «յեսայի մարգարէ, զրել են «ի մարգարէս»:

Սակայն այսպիսով զեռ բոլոր զգուարութիւնները չեն վերջանում. պարզաբանութեան կարու է, առանձնապէս, ինչպէս ակնարկեցինք, վերջին նախադասութիւնը: «Մկրտէր» և «Քարոզէր» բայերը բնազրի մէջ արտայայտուած են ներկայ գերրայով, որ միջոց է առլիս առաջինն իրրե «Յովհաննէս» անուան մակղիր ընդունել և («Քարոզէր» բայից առաջ «և»ը վերցնելով) թարգմանել. «Յիսուս Քրիստոսի աւետարանի սկիզբը՝ եղաւ Յովհաննէս Մկրտիչ, որ անապատում քարոզում էր ապաշխարութեան մլրտութիւն՝ մեղաց թողութեան համար». մինչ հականակ զէպքում թարգմանութիւնը կը լինէր. «—Յովհաննէս, որ մլրտում էր անապատում և քարոզում ապաշխարութեան մլրտութիւնն. — Յամենայն դէպս աւետարանչի մաքին հակառակ զնացած չենք լինի, եթէ նորա զրքի յառաջարանին մօտաւորապէս այսպիսի մի իմաստ տանք. Յիսուս Քրիստոսի աւետարանի քարոզութիւնը * (որ իմ պատմութեան նիւթը պէտք է կազմէ) սկսուեցաւ, մարգարէների զուշակութեան համաձայն, նորանով, որ Յովհաննէս յայտնուեցաւ անապատում և մլրտում էր ու ապաշխարութիւն քարոզում:

Առանց մեծ խորհրդի չէ, որ աւետարանի սկիզբը Յովհաննէս Մկրտիչ եղաւ, որ չին և Եսօր կատարանի մէջանդ՝ Քրիստոսի փրկարար յայտնութեամբ մեր առաջ բացուած երանութեան զրախտի զրան, այդ ուղարի բրդէ զգեստ հագած և մաշկեղէն զօտի կապած՝ մարտիսով և վայրենի մեղրով կերակրուող խիստ մարդն է կանգնած: «Ե՞նչ տեսնելու համար անապատ զուրս եկաք» ** հարցնում է Փրկիչն այն ժողովրդին, որ ուղերուած վազել էր մի օր Յովհաննէսի և տեից և ապա յեւսախար ետ քաշուել, կարծում էիք թէ ձեր դատարկ քմահամութիւն-

* Մատք. Գ. 3. Ղուկ. Գ. 4. ** Մատք. ԺԱ. 10.

*** Մատք. Գ. 1.

ԽԱ. Խ. 3.

* Սովորաց բարգմանում են՝ այն աւետարանը, որի առարկան է Յիսուս Քրիստոս կամ ու խօսում է Յ. Բ.-ի մասին: ** Ղուկ. Է. 24.

ների համաձայն շարժող մէկին պիտի տեսնեք, որ ինչ կոզմն ուղենաք այն կողմը թեքուի. կամ հարուստ, իշխանութեան տէր մէկին, որ ձեր առաջ ևս հարստութեան ու իշխանութեան դուռ բանար, առանց աշխատութեան մանելիք ու փափուկ կեանիք վայելիք. չորաչար սիստուումէլիք երբ այդ էլք վիճարում անապատի մէջ՝ այդպէս էլք հասկանում ձեր հայրերին եղած աւետեաց կատարումը։ Մովսէս աստուածախօս մարգարէից, Ամենակալ Տիրոջ նախանձով վառուած Նդիայից ի վեր բոլոր այն մարդիկ, որոնք Աստուածոյ խօսքի ճշմարիտ թարգմաններ, առագայ փրկութեան աւետողներ են հանդիսացել՝ հակառակ են եղել միշտ ամրուսի հաճոյքին, անողոք թշնամի մերկութեան և փափկութեան. և եթէ զուք մարգարէութեան այդ անսուա ողին փնտրէլիք Յովհաննէսի մէջ, կը ճանաչէլիք որ նա յիրաւի մարդարէ է, և ամենամեծը մարգարէներից, որովհետեւ իւր քարոզութեան մէջ ամիսուաւում է այն ամէնքը ինչ որ միւս մարգարէները միասեղ ասել էին, որովհետեւ յայտնի կերպով մասնացոյց է, անում այն փրկութիւնը որ ուրիշների համար ստուերի մէջ թագնուած մի ակնկալութիւն էր միայն։

Յովհաննէս Մկաբարի խօսքն ու զործը շատ ընդարձակ անդ չեն բանում՝ ամրոցը մի «առարշարեցէք» բառով արտայայտել կարիքի է, բայց այդ բառը երկար զարերի պատմութիւն է պարունակում՝ այն ամենակարեւոր խրառը, որ մարգարին կեանքը Փրկչի յայտնութիւնից տառաջ ընծայել կարող էր՝ նորա յայտնութեան անհրաժեշտութիւնը ցոյց տալով։ Նախ քան Աստուածոյ արքայութիւնը կամ յաւիտենական երանութիւնը մատչելի կը լինէր մարզոց համար, նորա պէտք է այն եղակացութեան դային, որ իրենք իրենց, այնպէս ինչպէս կան, ոչ մի բանի հասնել չեն կարող չեն կարող իսկական և տևական երջանկութեան հասնել մինչեւ որ չժօօթափեն վերայից և չմերժեն իրենց զգայական ցանկութիւնների պատրաստած կարծեցեալ երջանկութիւնը, չժօօթափեն և չմերժեն այն մեղքը, որ բաժանում է իրենց ճշմարիտ երջանկութեան միակ աղբիրից։ Աստուածոց,

Ահա թէ ինչու Աստուածոյ արքայութեան կարապեա՝ ապաշխարութիւն քարոզող Յովհաննէսը պէտք է հանդիսանար. երկնային հարստանեաց փեսայի բարեկամ՝ այդ չուտով և շխանց աշխարհի բոլոր զուարժութիւններից խոյս տուող անապատի մարդը լինէր։ Երկնային հարստանեաց ուրախութեան նա ինքը մասնակից չէ, այլ զրոխից միայն լսում է փեսայի ձայնը և հրձուում. մարդարէ էր նա միայն, անսուաւում էր հոգւով գալիք փրկութիւնը, բայց այդ փրկութեան բոլոր խորհուրդների մէջ թափանցել չէր կարող։ Ուստի և երբ հանդէս է զալիս իսկական միջնորդը փրկութեան, և զործում է իշխանաբար՝ զործեր, որոնք առըբեր էին Յովհաննէսի և նորանման երկիւղածների սպասածից, զծում է տիրաբար նոր շաւիզներ, որոնց վերայ չինն առանց այլեայլութեան, առանց վերանորոգման ոտք պիտի չլինէր՝ նա շուաբում և տատամում է առ վայրկեան հարցնում է ինքն իրեն և հարցնել է տալիս իւր աշակերտների միջոցաւ։ «Դու ևս որ գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք»։ Ճին ուիսաի ներկայացուցիչ էր նաև և երկրի վերայ ունեցած նորամեծ կոչումը թոյլ չէր տալիս այնու ամենայնիւ այդ ուխտի սահմաններից ելնելու և նորի մէջ թեակիոնելու։ այդ նկատմամբ նոր ուխտի յետին ժառանգը, Աստուածոյ արքայութեան մէջ փորբիկը մեծ է նորանից։ Սակայն Տիրոջ կարապեաը իւր այդ սահմանափակութեամբ և փորբութեամբ հանգերձ յանչափս պատկառելի է քրիստոնեայ մարդկութեան համար, և պէտք է մնայ. Տիրոջ այն հաւատարիմ սպասուորներից է նա, որ իւր զործը վերջանելուց յետոյ՝ «Ճառայք անպիտանք էաք, զոր ինչ պարան էաք առնել՝ արարաք» ասաց համեստութեամբ և հեռացաւ, բայց նորա անունը մնաց կենդանի իրեր ամենապատուական ծառայի անուն և նորա զործը անքակտելի կերպով կապուած պէտք է մնայ իւր Տիրոջ զործի հետ, փրկութեան աւետարանի առաջին էջը կազմ։

Ավաշխարութեան մկրտութիւն էր քարոզում Յովհաննէս. իսկական մկրտութիւն՝ չոգւոյ մկրտութիւն, որ մարդու մէջ բուն դրան մեղքը չնշում և ընդունակ է դարձ-

նում մի նոր հոգեսր կեանքի՝ նա տալ չէր կարող, այլ ինքն իսկ կարօս էր այդպիսի մը կըրտութեան: Բայց նորա ապաշխարութեան մըրտութիւնը կենդանի և շօշափելի օրինակով ցոյց էր տալիս, որ ակնկալեալ, և իւր կարապետութեամբ սկսուող Աստուծոյ արքայութեան ուրախութիւններին մասնակից լինելու իրաւունք չէ ընծայում ոչ Արքահամի զաւակ լինելը և ոչ ուրիշ որ և է արտաքին արտօնութիւն, այլ միայն մի լուրջ նախապատրաստութիւն՝ սրտապին ապաշխարութեամբ, հոգեսր լուացմամբ: Ամենակալի առաջ մինչ ի գետին խոնարհելով, սեփական բոլոր ցանկութիւններն ու կրթերը թողնելով և նորա սուրբ կամքին միայն հպատակելով:

Զուր տեղը չէ, որ առանձնապէս հայ ժողովուրդը մեծ սիրով կապուած է «եօթնանուն սուրբ Կարապետի» հետ և բազմաթիւ գեղեցիկ, շատ անգամ ըստ երեւութիւն նորա պատմական կոչման անհամապատասխան, աւանդութիւններ ու երգեր է հիւսել նորա անուան շուրջ: Հարաբազդ կեանքի գտոն հարուածները սովորեցրել են՝ իոր ըմբռնելու յանձին Ս. Յովհաննէսի մարմնացած ապաշխարութեան և յօժար կամքով զրկանքներ կըրելու անհրաժեշտ կարիքը ճշմարիտ քրիստոնէի համար: Ս. Կարապետից իւր սրտի մուրաստն առնելու նպատակաւ հօթ տարի սրա պահող ու իստաւորը խորհրդաւոր կերպով ենթարկուում է քրիստոնէութեան այն ամենամեծ գաղափարին, թէ սրբութիւն և զգաստութիւն անհրաժեշտ պայմաններ են սրտի սուրբ իդակերին համար: Թէ երանութեան զրախոտի ճանապարհը նեղ է, փուշ ու տատասկով ծածկուած, և խստամբերութեամբ այդ փշերը կոխելը կրթերը սանձելով և ցանկութիւնները սահմանի մէջ զընելով այդ ներ ճանապարհը բռնել պէտք է:

Այսպէս ահա Ծիրոջ ճգնազգեաց կարարապետը առաջնորդում է իրեն հետեւողներին և իւր քարոզի համաձայն ապաշխարողներին գեպի երկնային զբախտը, գեպի Աստուծոյ արքայութիւն և ճշմարիտ անանց ուրախութիւն:

ՀԵՐՈՎԴԵՍ ՄԵՇ.

Այս անունը ծանօթ է ամրող քրիստոնեայ աշխարհին, իրեւ ամենազարհուրելի և ատելի բռնաւորի անուն՝ թեմզեհէմի մանկանց կոտորածի պատմութիւնից: մասնաւորապէս մեր մէջ նա յայնի է նաև այն յարարերութիւնից, որ Խորենացու պատմելով եղել է Հերովդէսի և Արքար թագաւորի մէջ: Սակայն թէ ինչ մարդ էր նա իսկապէս և ինչ զեր է կատարել պատմութեան մէջ՝ շատ քըրչերը երեւ այդ մասին որոշ զաղափար ունին, և ուրեմն շատերի համար հետաքրքիր պէտք է լինի համառատ կենսազրութիւնն այդ արիւնածարաւ թագաւորի: որի անունը կապուած է խաղաղութեան և ճշմարտութեան թագաւոր՝ աշխարհի Փրկչի յայտնութեան հետ:

Հերովդէս հին ազնուական ցեղից չէր: Խաղաղէս յայտնի է Փրկչական թուականից 168 տարի առաջ Մատաթէ քահանան Անտիոքոս Դ. Եպիփանի հանած հալածանքի զէմ զուխ բարձրացրեց և վրէժինդիթ հանդիսացաւ Խորոյէլի Աստուծոյ սրբութիւններին հասցրած անարգանքի համար: Նորա հերոս որդին՝ Յուղա Մակարէ, հայրենի կրօնի նախանձամնդիր մի քաջարի խմբի զլուխ անցած, ոչ միայն երուսաղէմը մաքրեց այլազգիներից և Ծիրոջ պաշտամունքը վերահստատեց, այլ և սկիզբ զրաւ մի անկախ հրեական իշխանութեան, որ նորա եղբօր թոռ Յուղա Արիստորուզոսի օրով, 105 թ.-ին ն. թ., թագաւորութեան փոխուեցաւ: Մատաթէ մի նախահօր անունով այս իշխանական տունը, որ շուտով քահանայապետութիւնն ես սեփականնեց, հասմոնեան է կոչուում: Կամ Յուղա Մակարէի անունով Մակարայիցի: Այս առաջ վերջին շառաւղին էր մեր պատմութեան մէջ ծանօթ Հիւրկանոս Բ. մեղկ և անընդունակ քահանայապետը, որ զին նշանաւոր Աղեքսանդրա թագուհու, որ մեծ ընծաներով ընդունել էր հայոց Ծիրան Բ. թագաւորին, երբ նա տհագին զօրքով Պաղպեսամինի վերայ արշաւեց: Հիւրկանոսի ա-